

Սույն փաստաթուղթը միայն տեղեկատվական գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում:

►B

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ թիվ 643/2009 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)

2009 թվականի հուլիսի 22-ի

**Կենցաղային սառնարանային տեխնիկայի համար էկոդիզայնի մասով
պահանջների մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2005/32/ԵՀ
հրահանգի իրականացման մասին**

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 191, 23.07.2009թ., էջ 53)

Փոփոխված է՝

►C1 ՊՏ L 226, 28.08.2009թ., ուղղումով էջ 23 (643/2009)

▼B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով էներգասպառող արտադրատեսակների համար էկոդիզայնին ներկայացվող պահանջները սահմանելու համար շրջանակ սահմանելու մասին և Խորհրդի 92/42/ԵՏՀ հրահանգը և Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 96/57/ԵՀ և 2000/55/ԵՀ հրահանգները փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի 2005/32/ԵՀ հրահանգը [1], և մասնավորապես դրա 15(1) հոդվածը,

Էկոդիզայնի հարցերի շուրջ խորհրդակցական ֆորումում քննարկումներից հետո,

Քանի որ

- 1) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 96/57/ԵՀ կենցաղային էլեկտրական սառնարանների, սառցարանների և դրանց համակցումը հանդիսացող սարքերի համար էներգաարդյունավետության մասով պահանջների

մասին հրահանգով (2) սահմանվում են կենցաղային սառցարանային տեխնիկայի մասին դրույթները: Սույն Հրահանգում սահմանված պահանջները, որոնք կիրառվել են 1999 թվականից ի վեր, այժմ արդեն հնացել են/արդիական չեն,

- 2) 2005/32/ԵՀ հրահանգի համաձայն էկոդիզայնին ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն Հանձնաժողովի կողմից էներգասպառող այն արտադրատեսակների համար, որոնք ունեն վաճառքի և շրջանառության էական ծավալներ, նշանակալից ազդեցություն են գործում շրջակա միջավայրի վրա և մեծ հնարավորություն ունեն շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու առումով՝ չհանգեցնելով չափազանց մեծ ծախսերի,
- 3) 2005/32/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսվում է, որ 19(3) հոդվածում նշված ընթացակարգին և 15(2) հոդվածով սահմանված չափորոշիչներին համապատասխան, և էկոդիզայնի հարցերի վերաբերյալ խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո, Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, ներմուծում է կենցաղային սառնարանային տեխնիկայի համար կիրարկող նոր միջոց, որով ուժը կորցրած է ճանաչվում 96/57/ԵՀ հրահանգը,
- 4) Հանձնաժողովն իրականացրել է նախապատրաստական ուսումնասիրություն՝ տնային տնտեսություններում սովորաբար օգտագործվող սառնարանային տեխնիկայի տեխնիկական, բնապահպանական և տնտեսական հայեցակետերը/կողմերը վերլուծելու համար: Այդ ուսումնասիրությունը մշակվել է Համայնքի և երրորդ երկրների շահառուների և շահագրգիռ կողմերի հետ համատեղ, և արդյունքները հրապարակվել են Հանձնաժողովի ԵՎՐՈՊԱ ինտերնետային կայքէջում,
- 5) արտորբցիոն սառնարանային մեքենաների և թերմաէլեկտրական սառեցմամբ սառնարանային տեխնիկաների, ինչպես օրինակ՝ ըմպելիքների համար փոքր սառնարանները, էներգաարդյունավետությունը կարող է զգալիորեն բարելավվել: Ուստի այդ տեխնիկաները պետք է ընդգրկվեն սույն Կանոնակարգում,

- 6) սույն Կանոնակարգի նպատակներով որպես կարևոր էկոլոգիական ասպեկտներ առանձնացվել են օգտագործման փուլում էներգասպառումը և արտադրատեսակի բնութագիրը, որոնք նախագծվում են ապահովելու վերջնական սպառողի կողմից կենցաղային սառնարանային տեխնիկայի էկոլոգիապես առավել անվտանգ օգտագործումը,
- 7) նախապատրաստական ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2005/32/ԵՀ հրահանգի I հավելվածի 1-ին Մասում նշված էկոլոգիայի այլ չափանիշների մասով պահանջները անհրաժեշտ չեն,
- 8) Համայնքում սույն Կանոնակարգի համաձայն արտադրանքի էլեկտրաէներգիայի սպառման ծավալները 2005 թվականին կազմել են 122 միլիարդ կիլովատ/տերավատ ժամ, ինչն համարժեք է CO₂-ի 56 միլիոն տոննա արտանետմանը: Քանի որ մինչև 2020 թվականը կենցաղային սառնարանային տեխնիկայի նախատեսվող էներգասպառման ծավալները կնվազեն, ակնկալվում է, որ այդ նվազման գործընթացը կդանդաղի հնացած/ոչ արդիական պահանջների և էներգաարդյունավետության պիտակների շնորհման արդյունքում: Ուստի ծախսարդյունավետ էներգախնայողության հնարավորությունը հնարավոր չի լինի իրականացնել, եթե էկոլոգիայի մասով գործող/առկա պահանջները արդիականացնելու նպատակով նոր միջոցներ չներմուծվեն/ձեռնարկվեն,
- 9) սույն Կանոնակարգով նախատեսվող արտադրատեսակների էներգասպառումը պետք է դարձվի առավել արդյունավետ՝ կիրառելով գործող չարտոնագրված ծախսարդյունավետ տեխնոլոգիաներ, որոնք կնվազեցնեն այդ արտադրատեսակների գնման և շահագործման ընդհանուր ծախսերը,
- 10) սույն Կանոնակարգով պետք է ապահովվի սույն Կանոնակարգով նախատեսվող առավել էներգաարդյունավետ արտադրատեսակների շուկայահանումը,

- 11) Էկոդիզայնի պահանջները չպետք է բացասական ազդեցություն ունենան արտադրանքի ֆունկցիոնալության վրա վերջնական սպառողի տեսանկյունից, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության կամ շրջակա միջավայրի վրա: Մասնավորապես, ակտիվ շահագործման փուլում էներգախնայողությունից ստացված օգուտները պետք է էապես գերազանցեն սույն Կանոնակարգով նախատեսվող արտադրատեսակների արտադրության փուլում հնարավոր լրացուցիչ շրջակա միջավայրին հասցվող վնասները,

- 12) Էկոդիզայնի պահանջները պետք է ներմուծվեն աստիճանաբար՝ արտադրողներին սույն Կանոնակարգով նախատեսված արտադրատեսակները ըստ անհրաժեշտության վերանախագծելու բավականաչափ ժամանակ տալու համար: Պետք է բավականաչափ ժամանակ հատկացվի՝ շուկայում սարքվածքների վրա բացասական ազդեցություններից խուսափելու համար և հաշվի առնելու վերջնական սպառողների և արտադրողների, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների համար ծախսերի հետևանքները/ֆինանսական հնարավոր կորուստները՝ ապահովելով սույն Կանոնակարգով սահմանված նպատակների ժամանակին իրականացումը,

- 13) համապատասխանության հավաստումը և արտադրանքի որոշակի պարամետրերի չափումները պետք է իրականացվեն հուսալի, ճշգրիտ և վերարտադրելի մեթոդներով, որոնք հիմնվում են լայն կիրառություն ունեցող արդիական մոտեցումների/նորագույն մեթոդների վրա, իսկ հնարավորության դեպքում՝ եվրոպական ստանդարտացման մարմինների կողմից ընդունված միասնական ստանդարտների վրա, ինչպես դա նախատեսված է տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի ոլորտում տեղեկությունների տրամադրման կարգը և «Տեղեկատվական հասարակության» ծառայությունների կանոնները սահմանող Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի առաջին հավելվածով,

- 14) 2005/32/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համապատասխան՝ սույն Կանոնակարգով պետք է սահմանվի համապատասխանության հավաստման կիրառվող

ընթացակարգերը,

- 15) համապատասխանությունը ստուգելու համար արտադրողները պետք է տեղեկատվություն տրամադրեն 2005/32/ԵՀ հրահանգի V և VI հավելվածներում նշված տեխնիկական փաստաթղթերում, եթե այդ տեղեկատվությունը վերաբերում է սույն Կանոնակարգով սահմանված պահանջներին,
- 16) բացի սույն Կանոնակարգով սահմանված պարտադիր իրավական ուժ ունեցող պահանջներից, պետք է սահմանվեն կողմնորոշիչ հենանիշների գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիաների կիրառման և փակ շրջանառության պոմպերի էկոլոգիական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության մասին,
- 17) ուստի, 96/57/ԵՏՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի,
- 18) սույն Կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2005/32/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

1. Սույն Կանոնակարգով սահմանվում են էկոդիզայնի մասով պահանջներ մինչև 1500 լիտր տարողությամբ էլեկտրական ցանցի միջոցով աշխատող կենցաղային սառնարանային տեխնիկայի շուկայահանման մասով:

2. Սույն կանոնակարգը կիրառվում է էլեկտրական ցանցի միջոցով աշխատող կենցաղային սառնարանային տեխնիկայի նկատմամբ այդ թվում նաև նրանց նկատմամբ որոնք վաճառվում են ոչ կենցաղային օգտագործման համար կամ սննդամթերքից բացի այլ արտադրատեսակների սառեցման համար:

Այն նույնպես կիրառվում է այն էլեկտրական ցանցի միջոցով աշխատող կենցաղային սառնարանային տեխնիկայի նկատմամբ որոնք կարող են մարտկոցով աշխատել:

3. Սույն Կանոնակարգի կարգավորման դաշտի մեջ չեն մտնում՝

ա) այն սառնարանային տեխնիկան որը սնուցվում է էլեկտրականությունից բացի էներգիայի այլ աղբյուրներից ինչպես օրինակ՝ հեղուկացված նավթային գազ կերոսին և կենսադիզելային վառելիք,

բ) մարտկոցներով աշխատող սառնարանային տեխնիկան կարող է միացվել էլեկտրական ցանցին հաստատուն հոսանքի/փոփոխական հոսանքի կերպափոխիչներ որոնք առանձին են գնվում,

գ) հատուկ պատվերով արտադրված սառնարանային տեխնիկան՝ որպես եզակի արտադրություն և ոչ համարժեք սառնարանային տեխնիկայի այլ մոդելներին,

դ) սպասարկման ոլորտում կիրառման համար սառնարանային տեխնիկա, որտեղ սառեցված սննդամթերքի հեռացումը էլեկտրոնային եղանակով չափված և, որ տեղեկությունները կարող են ավտոմատ կերպով փոխանցվել ցանցային սնուցման միացումից դեպի հեռակառավարման համակարգ հաշվելու համար,

ե) տեխնիկա, որոնց հիմնական նշանակությունը սառեցման միջոցով սննդամթերքի պահպանումը/պահումը չէ, ինչպես օրինակ՝ սառույց պատրաստելու համար նախատեսված տարաներ/սարքեր կամ պաղեցված խմիչքների դիսպենսեր:

Հոդված 2

Սահմանումները

Ի լրումն 2005/32/ԵՀ հրահանգով տրված սահմանումների՝ կիրառվում են հետևյալ սահմանումները՝ դիսպենսեր

1. «սննդամթերք» նշանակում է սնունդ, դրա բաղադրիչներ, խմիչքներ, այդ թվում նաև գինի և առաջնային սպառման համար նախատեսվող այլ մթերք, որի համար պահանջվում է կոնկրետ ֆիքսված ջերմաստիճանում սառեցում.
2. «կենցաղային սառնարանային տեխնիկա» նշանակում է առանձնացված խցիկ, որն ունի մեկ կամ մի քանի բաժիններ, որոնք նախատեսվում են սննդամթերքը սառնարանում պահելու կամ այն սառեցնելու համար, կամ ոչ մասնագիտական նպատակներով սառնարանում պահվող կամ սառեցված սննդամթերք պահելու համար, որը սառեցվում է մեկ կամ մի քանի՝ էներգիայի սպառմամբ տեղի ունեցող գործընթացներ, այդ թվում նաև տեխնիկա, որոնք վաճառվում են որպես կոմպլեկտավորված տարրերի հավաքածուները, որոնք հավաքում է վերջնական սպառողը.
3. «սառնարան» նշանակում է սառնարանային տեխնիկա, որը նախատեսվում է սննդամթերքի պահպանման/պահման համար, որտեղ առնվազն մեկ բաժին հարմա՝ է/նախատեսվում է թարմ միս և (կամ) խմիչքներ, այդ թվում նաև գինի պահելու համար.
4. «կոմպրեսորային սառնարանային տեխնիկա» նշանակում է սառնարանային տեխնիկա, որտեղ սառեցումը կատարվում է շարժիչով աշխատող կոմպրեսորի միջոցով.
5. «աբսորբցիոն սառնարանային տեխնիկա/մեքենաներ» նշանակում է սառնարանային տեխնիկա, որտեղ սառեցումը կատարվում է աբսորբցիոն գործընթացի միջոցով ջերմությունը որպես էներգիայի աղբյուր օգտագործելով.
6. «սառցախցիկով սառնարան» նշանակում է սառնարանային տեխնիկա առնվազն մեկ՝ թարմ մթերք պահելու համար խցիկ և առնվազն ևս մեկ խցիկ թարմ մթերք սառեցնելու և եռաստղանի պահելու պայմաններում (սննդամթերքի սառցախցիկ) սառեցված սննդամթերքը պահելու համար.
7. «սառեցված սննդամթերքը պահելու արկղ/խցիկ» նշանակում է սառնարանային տեխնիկա սառեցված սննդամթերք պահելու համար հարմար մեկ կամ մի քանի խցիկներով.
8. «ցածր ջերմաստիճանով աշխատող սառնարան» նշանակում է սառնարանային տեխնիկա մեկ կամ մի քանի խցիկներով, որոնք հարմար են սննդամթերքը սառեցնելու համար մթնոլորտի օդի ջերմաստիճանից մինչև – 18 °C և որը նույնպես հարմար է սառեցված սննդամթերքը երեք աստղանի/եռաստղանի պահելու պայմաններում պահելու

համար. ցածր ջերմաստիճանով աշխատող սառնարանը կարող է նույնպես ներառել երկաստղանի բաժիններ և (կամ) խցիկներ խցիկի կամ պահարանի ներսում.

9. «գինի պահելու համար տեխնիկա» նշանակում է սառնարանային տեխնիկա, որը բացի մեկ կամ մի քանի՝ գինիներ պահելու համար խցիկներից ոչ մի այլ խցիկ չունի.

10. «ունիվերսալ տեխնիկա» նշանակում է սառնարանային տեխնիկա, որը բացի ունիվերսալ օգտագործման համար մեկ կամ մի քանի խցիկներից բացի ոչ մի այլ խցիկ չունի.

11. «համարժեք սառնարանային տեխնիկա» նշանակում է միևնույն համախառն և պահելու ծավալներով, միևնույն տեխնիկական, արդյունավետության և շահագործման բնութագրերով շուկայահանված նմուշ և միևնույն խցիկի տեսակներ միևնույն արտադրողի կողմից տարբեր առևտրային ծածկագրի ներքո շուկայահանված որպես մեկ այլ սառնարանային տեխնիկա:

II–IV հավելվածների նպատակներով լրացուցիչ սահմանումները տրված են I հավելվածում:

Հոդված 3

Էկոդիզայնի պահանջները

Սույն Կանոնակարգի շրջանակներում կենցաղային սառնարանային տեխնիկայի համար ընդհանրացված էկոդիզայնի պահանջները տրված են II հավելվածի 1-ին կետում: Սույն Կանոնակարգի շրջանակներում կենցաղային սառնարանային տեխնիկայի համար կոնկրետ էկոդիզայնի պահանջները տրված են II հավելվածի 2-րդ կետում:

Հոդված 4

Համապատասխանության հավաստում

1. 2005/32/ԵՀ հրահանգի 8–րդ հոդվածում նշված համապատասխանության հավաստման ընթացակարգը նշված հրահանգի IV հավելվածում սահմանված նախագծման հսկողության ներքին համակարգն է կամ նույն հրահանգի V հավելվածում սահմանված կառավարման համակարգն է:

2. 2005/32/ԵՀ հրահանգի 8–րդ հոդվածի համաձայն համապատասխանության հավաստման նպատակներով տեխնիկական փաստաթղթերի փաթեթը ներառում է

արտադրատեսակի մասին տեղեկությունների պատճեն, որը տրամադրվում է III հավելվածի 2-րդ կետին համապատասխան և սույն Կանոնակարգի IV հավելվածում սահմանված հաշվարկների արդյունքները:

Եթե կենցաղային սառնարանային տեխնիկայի կոնկրետ նմուշի/մոդելի համար տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ կենցաղային սառնարանային այլ համարժեք տեխնիկայից արտամիջարկման/էքստրապոլյացիայի կամ այդ երկու միջոցով, փաստաթղթերը պետք է ներառեն այդ հաշվարկների կամ արտամիջարկումների կամ այդ երկուսի ինչպես նաև կատարված հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար արտադրողների կողմից կատարված թեստերի մանրամասները: Նման դեպքերում տեխնիկական փաստաթղթերը պետք է նույնպես ներառեն կենցաղային սառնարանային այլ համարժեք տեխնիկայի բոլոր նմուշների ցանկը, որտեղ տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները ստացվել դրա հիման վրա:

Հոդված 5

Ստուգման ընթացակարգը շուկայի վերահսկողության նպատակներով

Սույն Կանոնակարգով սահմանված II հավելվածում սահմանված շուկայի վերահսկողություն իրականացնելիս անդամ պետության մարմինները կիրառում են սույն Կանոնակարգի V Հավելվածում նկարագրված ստուգման ընթացակարգը:

Հոդված 6

Հենանիշեր

Սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելու պահին շուկայում առկա առավել բարձր կատարողականով կենցաղային սառնարանային տեխնիկայի համար ինդիկատիվ հենանիշերը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը վերանայում է սույն Կանոնակարգը տեխնոլոգիական առաջընթացի ներքո դրա ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ քան հինգ տարի հետո և այդ վերանայման արդյունքը ներկայացնում է կողմից խորհրդատվական ֆորումին: Այդ վերանայման մեջ մասնավորապես գնահատվում է V հավելվածի ստուգման առավելագույն թույլատրելի շեղումները և IV հավելվածի ուղղման գործակիցների արժեքների վերացման կամ նվազեցման հնարավորությունները:

Հանձնաժողովը գնահատում է սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ քան երկու տարի անց գինու պահման համար տեխնիկայի մասով էկոդիզայնի կոնկրետ պահանջներ սահմանելու անհրաժեշտությունը:

Հոդված 8

Ուժը կորցրած ճանաչելը

Թիվ 96/57/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2010 թվականի հուլիսի 1-ից:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակումից հետո 20-րդ օրը:

2. II հավելվածի 1(1) կետում սահմանված էկոդիզայնի ընդհանուր պահանջները կիրառվում են 2010 թվականի հուլիսի 1-ից:

II հավելվածի 1(2) կետում սահմանված էկոդիզայնի ընդհանուր պահանջները կիրառվում են 2010 թվականի հուլիսի 1-ից:

II հավելվածի 2-րդ կետում սահմանված էներգաարդյունավետության ինդեքս մասով էկոդիզայնի հատուկ պահանջները կիրառվում են II հավելվածի 1-ից 2-րդ աղյուսակներում սահմանված ժամանակացույցի համաձայն:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և ուղղակիորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

II-ից VI-րդ հավելվածների նպատակներով կիրառվող սահմանումները

II-ից VI-րդ հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

ա) «այլ տեսակի սառնարանային տեխնիկա» նշանակում է սառնարանային տեխնիկա, որտեղ սառեցումը կատարվում է կոմպրեսորային կամ արսորբցիոն տեսակներից բացի այլ տեխնոլոգիայով կամ գործընթացով,

բ) «չսառեցնող համակարգ» նշանակում է եղյամի մշտական գոյացությունը կանխելու համար ատոմատ կերպով աշխատող համակարգ՝ մինչդեռ պահեցումն ապահովվում է օդի հարկադիր շրջանառությամբ, գոլորշիարարը կամ գոլորշիարարները հալեցվել են հալեցման ատոմատ համակարգի միջոցով և հալեցման արդյունքում ստացվող ջուրը ավտոմատ եղանակով հեռացվում է.

գ) «չսառեցնող խցիկ» նշանակում է չսառեցնող համակարգով հալեցվող խցիկ,

դ) «ներկառուցված տեխնիկա» նշանակում է պահարանում տեղադրման ենթակա ֆիքսված սառնարանային տեխնիկա պատի մեջ կամ նմանատիպ վայրում փորակով/ակոսատով և որը պետք է վերնական կահավորվի կահույքով

ե) «սառնարան-նկուղ» նշանակում է սառնարանային տեխնիկա, որտեղ կան թարմ սննդամթերքի համար առնվազն մեկ խցիկ և մեկ նկուղային խցիկներ, սակայն սառեցրած սննդամթերքի պահման, պաղեցման կամ սառույց պատրաստելու համար խցիկներ.

զ) «նկուղ» նշանակում է սառնարանային սառնարանը, որտեղ միայն մեկ կամ մի քանի խցիկներ.

է) «սառնարան-հովացուցիչ» նշանակում է սառնարանային տեխնիկա, որտեղ առնվազն թարմ սննդամթերքի պահման խցիկ և հովացուցիչ խցիկ կա, սակայն չկա սառեցված սննդամթերքի համար խցիկներ.

ը) (թ)-ից (ժզ) կետերում թվարկված ցանկացած խցիկներ.

թ) «թարմ մսի պահման խցիկ» նշանակում է չսառեցված սննդամթերքի համար նախատեսվող խցիկ, որն ինքնին կարող է բաժանվել ենթախցիկների.

ժ) «նկուղի խցիկ» նշանակում է կոնկրետ սննդամթերքի կամ ըմպելիքների պահման համար նախատեսվող խցիկ առավել բարձր ջերմաստիճանով, քան թարմ սննդամթերքի պահման խցիկը.

ժա) «պաղեցման խցիկ» նշանակում է շուտ փչացող սննդամթերքի պահման համար կոնկրետ նախատեսվող խցիկ.

ժբ) «սառույցի պատրաստման խցիկ» նշանակում է սառեցման և սառույցի պահման համար կոնկրետ նախատեսվող ցածր ջերմաստիճանով խցիկ.

ժգ) «սառեցված սննդամթերքի պահման համար խցիկ» նշանակում է կոնկրետ սառեցված սննդամթերքի պահման համար նախատեսվող ցածր ջերմաստիճանի խցիկ և որը դասակարգվում է ըստ ջերմաստիճանի հետևյալ կերպ՝

i) «երկաստղանի խցիկ»՝ սառեցված սննդամթերքի պահման համար խցիկ, որտեղ ջերմաստիճանը չի գերազանցում – 6 °C-ը.

ii) «եռաստղանի խցիկ»՝ սառեցված սննդամթերքի պահման համար խցիկ, որտեղ ջերմաստիճանը չի գերազանցում – 12 °C.

iii) «եռաստղանի խցիկ»՝ սառեցված սննդամթերքի պահման համար խցիկ, որտեղ ջերմաստիճանը չի գերազանցում – 18 °C.

iv) «սննդամթերքի սառեցման խցիկ» (կամ «չորսաստղանի խցիկ»)՝ դո

(v) «0-star compartment»: սառեցված սննդամթերքի պահման խցիկ, որտեղ ջերմաստիճանը < 0 °C է և որը կարող է օգտագործվել սառույցի սառեցման և պահման համար, սակայն չի նախատեսվում շուտ փչացող սննդամթերքի համար,

ժդ) «գինու պահման խցիկ» նշանակում է բացառապես նախագծված գինիների կարճաժամկետ պահման համար՝ հասցնելու համար գինիները խմելու համար կատարյալ ջերմաստիճանի կամ գինիների երկարաժամկետ պահման համար՝ գինիների հասունացնում թույլ տալու համար՝ հետևյալ հատկություններով՝

i) պահման շարունակական ջերմաստիճան կամ նախօրոք համալարված/սարքաբերված կամ մեխանիկական սարքաբերված արտադրողի ուղեցույցի համաձայն + 5 °C-ից + 20 °C ջերմաստիճանով.

ii) կենցաղային սառնարանային տեխնիկայի համար կլիմայի դասով սահմանված յուրաքանչյուր հայտարարված մթնոլորտային ջերմաստիճանով 0,5 Կ-ից պակաս՝

ժամանակի ընթացքում տարբերություն/տատանմամբ պահման ջերմաստիճան (ջերմաստիճաններ).

iii) 50 %-ից 80 % միջակայքում խցիկի խոնավության ակտիվ կամ պասիվ հսկողություն.

iv) կառուցվածք նվազեցնելու համար դեպի խցիկ տատանման/վիբրացիայի փոխանցումը, լինի դա սառնարանի կոմպրեսորից թե ցանկացած այլ արտաքին աղբյուրից.

ժե) «ունիվերսալ օգտագործման համար խցիկ» նշանակում է խցիկի տեսակների ջերմաստիճաններից երկուսով կամ մի քանիսոց օգտագործման համար նախատեսվող խցիկ և, որը կարող է սարքաբերվել վերջնական սպառողի կողմից շարունակաբար պահպանելու ըստ արտադրողի ցուցումների յուրաքանչյուր տեսակի խցիկի նկատմամբ կիրառվող գործող ջերմաստիճանային միջակայքը. սակայն եթե հատկության շնորհիվ խցիկում ջերմաստիճանները կարող են փոխվել տարբեր գործող ջերմաստիճանային միջակայքի միայն սահմանափակ ժամանակահատվածով (ինչպես օրինակ՝ արագ սառեցման հարմարանք/սարք), խցիկը ինչպես սահմանված է Կանոնակարգով “ունիվերսալ օգտագործման համար խցիկ” չէ.

ժզ) «այլ խցիկ» նշանակում է գինու պահման համար խցիկից բացի այլ խցիկ, որը նախատեսված է + 14 °C ջերմաստիճանից բարձր ջերմաստիճանում կոնկրետ սննդամթերք պահելու համար.

ժէ) «երկաստղանի բաժին» նշանակում է սննդի սառնարան, սննդի սառեցման համար խցիկ, եռաստղանի խցիկ կամ եռաստղանի սառեցված սննդամթերքի պահման պահարան, որը չունի իր առանձին դուռ կամ կափարիչը և որտեղ ջերմաստիճանը – 12 °C ոչ բարձր է.

ժը) «սառնարանային կրպակ» նշանակում է սննդամթերքի սառնարան, որտեղ խցիկը (խցիկները) մատչելի են սարքի վերին հատվածից կամ վերևից բացվող տեսակի ինչպես նաև ուղղահայաց տեսակի խցիկներ, սակայն որտեղ վերևից բացվող տեսակի խցիկի (խցիկների) համախառն ծավալը գերազանցում է տեխնիկայի ընդհանուր համախառն ծավալի 75 %-ը.

ժթ) «վերևից բացվող տեսակ» կամ «վերևից բացվող տեսակը» նշանակում է սարքի վերևից մատչելի խցիկով (խցիկներով) սառնարանային սարք.

ի) «ուղղահայաց տեսակ» նշանակում է տեխնիկայի առջևի հատվածից մատչելի խցիկով (խցիկներով) սառնարանային տեխնիկա.

իա) «արագ սառեցում» նշանակում է ռեվերսիվ հատկություն, որը ակտիվացվելու է վերջնական սպառողի կողմից արտադրողի ցուցումների համաձայն, որը նվազեցնում է սառնարանի պահման ջերմաստիճանը կամ սառնարանի խցիկը՝ չսառեցված սննդամթերքի առավել արագ սառեցման հասնելու նպատակով:

Կենցաղային սառնարանային տեխնիկայի համար էկոդիզայնի պահանջներ

1. ԷԿՈՂԻԶԱՅՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. 2010 թվականի հուլիսի 1-ից հետո՝

ա) Գինիների պահման համար սարքի դեպքում հետևյալ տեղեկությունները ներկայացվում են արտադրողների կողմից տրվող ուղեցույցում: «Այս սարքը նախատեսվում է բացառապես գինիների պահման համար»:

բ) Կենցաղային սառնարանային տեխնիկայի համար տեղեկությունները պետք է ներկայացվեն արտադրողների կողմից տրամադրվող ցուցումներում՝

- դարակների, զամբյուղների և դարակների համակցություն, որը հանգեցնում է տեխնիկայի համար առավելագույն արդյունավետության,

- ինչպես նվազեցնել օգտագործման/շահագործման փուլում կենցաղային սառնարանային տեխնիկայի էներգասպառումը:

2. 2013 թվականի հուլիսի 1-ից հետո՝

ա) Արագ սառեցման սարքը կամ ցանկացած այլ գործառույթ, որն ապահովվում է թերմոստատի սարքաբերման փոփոխման միջոցով, սառնարաններում և սառեցնող խցիկներում առաջին անգամ վերջնական սպառողի կողմից ակտիվացված արտադրողի ցուցումների համաձայն, ավտոմատ կերպով փոփոխել նախորդ նորմալ պահպանման ջերմաստիճանային պայմաններում ոչ ուշ քան 72 ժամ հետո: Այդ պահանջը չի կիրառվում մեկ թերմոստատ և մեկ կոմպրեսոր ունեցող սառնարան-սառեցնող սարքերի նկատմամբ, որոնք սարքավորված են էլեկտրամեխանիկական կարգավորման վահանակով,

բ) մեկ թերմոստատով կամ մեկ կոմպրեսորով սառնարան/սառեցնող սարքերը, որոնք սարքավորված են էլեկտրոնային կարգավորման վահանակով և կարող են օգտագործվել + 16°C ցածր մթնոլորտային օդում արտադրողի ցուցումների համաձայն կարող են լինել այնպիսին, որ ձմեռային ռեժիմում միացումը կամ համանման ֆունկցիան, որով երաշխավորվում է սառեցված մթերքի պահման ճիշտ ջերմաստիճանը ավտոմատ կերպով աշխատում է մթնոլորտային ջերմաստիճանի համաձայն, որտեղ սարքը տեղադրված է.

գ) 10 լիտրից ցածր պահման ծավալով կենցաղային սառնարանային տեխնիկական ավտոմատ կերպով սկսում է աշխատել 0,00 Վատտ էլեկտրաէներգիայի սպառմամբ ոչ ավելի քան մեկ

Ժամից հետո, երբ դատարկ է: Էներգասնուցման անջատիչի զուտ ներկայությունը չպետք է դիտվի բավարար սույն պահանջը կատարելու համար:

2. ԷԿՈՂԻԶԱՅՆԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ

10 լիտրին հավասար կամ դրանից բարձր պահման ծավալով կենցաղային սառնարանային տեխնիկան սույն Կանոնակարգի շրջանակներում համապատասխանում է 1-ին և 2-րդ աղյուսակներում տրված էներգաարդյունավետության ինդեքսի սահմանաչափին:

Առաջին և երկրորդ աղյուսակներում տրված էկոդիզայնի հատուկ պահանջները չպետք է կիրառվեն հետևյալի նկատմամբ՝

- գինիների պահման համար տեխնիկա, կամ
- աբսորբցիոն սառնարանային տեխնիկա/մեքենաներ և այլ տեսակի սառնարանային տեխնիկան պատկանում է 4-ից 9-րդ կատեգորիաներին, ինչպես սահմանված է IV հավելվածի 1-ին կետում:

Կենցաղային սառնարանային տեխնիկայի էներգաարդյունավետության ինդեքսը/ցուցիչը հաշվարկվում է IV հավելվածում նկարագրված ընթացակարգի համաձայն:

Աղյուսակ 1

Կոմպրեսորային սառնարանային տեխնիկա

Կիրառման ամսաթիվը	Էներգաարդյունավետության ինդեքս
2010 թվականի հուլիսի 1	ԷԱԻ < 55
2012 թվականի հուլիսի 1	ԷԱԻ < 44
2014 թվականի հուլիսի 1	ԷԱԻ < 42

Աղյուսակ 2

Աբսորբցիոն տեսակի և այլ տեսակի սառնարանային տեխնիկա

Կիրառման ամսաթիվը	Էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ)
2010 թվականի հուլիսի 1	ԷԱԻ < 150
2012 թվականի հուլիսի 1	ԷԱԻ < 125
2015	ԷԱԻ < 110

թվականի հուլիսի 1	
----------------------	--

ՀԱՎԵԼՎԱԾ III

Չափումները

Սույն Կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով և ստուգելու համար, պետք է պարբերաբար իրականացվեն չափումներ հուսալի, ճշգրիտ, արդիական և լայն ճանաչում ունեցող մեթոդներով, այդ թվում՝ այն մեթոդներով, որոնց հղում է արվել Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակված համապատասխան փաստաթղթերում:

1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հետազոտության համար կիրառվում են հետևյալ ընդհանուր պայմանները՝

1. Եթե հակակոնդենսացման տաքացուցիչները, որոնք կարող են միացվել և անջատվել վերջնական օգտագործողի կողմից նախատեսվում են, դրանք կարող են միացվել, և եթե կարգավորվում են, կարգավորվեն առավելագույն ջերմությամբ.

2. Եթե «դռան մեջ հարմարեցված սարքերը» (ինչպես օրինակ՝ սառույցի կամ պաղեցրած ջրի/ըմպելիքի դիսպենսերներ), որոնք կարող են միացվել և անջատվել վերջնական օգտագործողի կողմից նախատեսվում են, դրանք միացվում են էներգասպառման չափման ընթացքում, սակայն չեն աշխատում.

3. ունիվերսալ տեխնիկայի և խցիկների համար էներգասպառման չափման ընթացքում պահման ջերմաստիճանը ամենասառը խցիկի տեսակի նոմինալ ջերմաստիճանը, ինչպես համարվում է շարունակական նորմալ օգտագործման համար՝ արտադրողի ցուցումների համաձայն.

4. սառնարանային տեխնիկայի էներգասպառումը սահմանվում է ամենասառը կոնֆիգուրացիայով «այլ խցիկի» համար շարունակական նորմալ օգտագործման արտադրողի ցուցումների համաձայն, ինչպես սահմանված է՝ IV հավելվածի 5-րդ աղյուսակում:

2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

Պետք է սահմանվեն հետևյալ պարամետրերը՝

ա) «ընդհանուր չափսեր» որոնք չափվում են միլիմետրի ճշտությամբ.

բ) «օգտագործվող պահանջվող ընդհանուր տարածք» որոնք չափվում են միլիմետրի ճշտությամբ.

գ) «ընդհանուր համախառն ծավալ (ծավալներ)», որոնք չափվում են խորանարդ դեցիմետրի կամ լիտրի ընդհանուր թվին մետ.

դ) «պահման ծավալ (ծավալներ) և պահման ընդհանուր ծավալ (ծավալներ)», որը չափվում է խորանարդ դեցիմետրի կամ լիտրերի ընդհանուր նվին ամենամոտը.

ե) «հալեցնող տեսակ»,

զ) «պահման ջերմաստիճան»,

է) «էներգասպառում», որն արտահայտվում է 24 շամում կիլովատտ ժամում (կիլովատտ ժամում /24 ժամում), մինչև հազարերորդականը.

ը) «C1 ‘ջերմաստիճանի բարձրացման տևողությունը».

թ) «սառեցման կարողություն»,

ժ) «էներգասպառում», որը չափվում է Վատտերով կլորացված հարյուրերորդականով, և

ժա) «գինիների պահման համար խցիկի խոնավություն», որն արտահայտվում է տասներորդականով կլորացված տոկոս:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

Էներգաարդյունավետության ինդեքսի հաշվարկման մեթոդ

1. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Կենցաղային սառնարանային տեխնիկան դասակարգվում են ըստ կատեգորիաների 1-ին աղյուսակում: Յուրաքանչյուր կատեգորիա սահմանված է կոնկրետ խցիկի բաղադրությամբ/կազմով, ինչպես սահմանված է 2-րդ աղյուսակում և անկախ է դռների և/կամ դարակների քանակից:

Աղյուսակ 1

Կենցաղային սառնարանային տեխնիկայի կատեգորիաները

Կատեգորիա	Նշանակությունը
1	Մեկ կամ մի քանի թարմ սննդամթերքի պահման խցիկներով սառնարան
2	Սառնարան-նկուղի, նկուղի և գինիների պահման հարմարանքներ
3	Սառնարան-սառեցնող սարք և սառնարան օ-աստղանի խցիկով
4	մեկաստղանի խցիկով սառնարան
5	երկաստղանի խցիկով սառնարան
6	Եռաստղանի խցիկով սառնարան
7	Սառնարան-սառեցնող սարք
8	ուղղահայաց

	տեսակի սառեցնող սարքեր
9	Վերևից բացվող սառնարան
10	Ունիվերսալ օգտագործման և այլ սառնարանային տեխնիկա

Կենցաղային սառնարանային տեխնիկան չի կարող դասակարգվել 1-ից 9-րդ կատեգորիաներում քանի որ խցիկի ջերմաստիճանը դասակարգվում է 10-րդ կատեգորիայում:

Աղյուսակ 2

Կենցաղային սառնարանային տեխնիկայի դասակարգումը և համապատասխան խցիկի կազմվածքը

Նոմինալ ջերմաստիճան (ԷԱԻ համար) (°C)	Դիզայն T	+ 12	+ 12	+ 5	0	0	- 6	- 12	- 18	- 18	Կատեգորիա (թիվը)
Խցիկի տեսակները	Այլ	Գինիներ ի պահում	Նկուղի	Թարմ սննդամթերք ի պահում	Պաղեցում ը	0- աստղանի/սառց ի պատրաստում	1- աստղան ի	2- աստղան ի	3- աստղան ի	4- աստղան ի	
Տեխնիկայի կատեգորիա	Խցիկների բաղադրությունը										
ՄԵԿ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ԹԱՐՄ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՄԱՆ ԽՑԻԿՆԵՐՈՎ ՍԱՌՆԱՐԱՆ	N	N	N	Y	N	N	N	N	N	N	1
ՍԱՌՆԱՐԱՆ-	O	O	O	Y	N	N	N	N	N	N	2

ՆԿՈՒՂԻ, ՆԿՈՒՂԻ ԳԻՆԻՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐ	0	0	Y	N	N	N	N	N	N	N	
	N	Y	N	N	N	N	N	N	N	N	
ՍԱՌԵՑՆՈՂ ՍԱՐՔ ՍԱՌԵՑՆՈՂ ՍԱՌԵՑՆՈՂ ԱՍՏՂԱՆԻ ԽՑԻԿՈՎ	0	0	0	Y	Y	0	N	N	N	N	3
	0	0	0	Y	0	Y	N	N	N	N	
ՄԵԿԱՍՏՂԱՆԻ ԽՑԻԿՈՎ ՍԱՌԵՑՆՈՂ	0	0	0	Y	0	0	Y	N	N	N	4
ԵՐԿԱՍՏՂԱՆԻ ԽՑԻԿՈՎ ՍԱՌԵՑՆՈՂ	0	0	0	Y	0	0	0	Y	N	N	5
ԵՌԱՍՏՂԱՆԻ	0	0	0	Y	0	0	0	0	Y	N	6

1) նույնպես ներառում է եռաստղանի սառեցված սննդամթերքի պահարաններ:

Ծանոթագրություններ

Y = խցիկն առկա է.

Y = խցիկն առկա չէ.

O = խցիկը առկայությունը պարտադիր չէ:

Կենցաղային սառնարանային տեխնիկան դասակարգվում է մեկ կամ մի քանի կլիմայի դասերում, ինչպես երևում է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Կլիմայի դասերը

Դաս	Նշան	Մթնոլորտային միջին ջերմաստիճան °C
Ընդլայնված սահմանափակ	SN	+ 10-ից + 32
Սահմանափակ	N	+ 16-ից + 32
Սուբտրոպիկական	ST	+ 16-ից + 38
Տրոպիկական	T	+ 16-ից + 43

Սառնարանային տեխնիկան կարող է պահպանել պահման պահանջվող ջերմաստիճանները տարբեր խցիկներում միաժամանակ և թույլատրված ջերմաստիճանային շեղումների միջակայքում (հալեցման պարբերաշրջանում):

Ունիվերսալ օգտագործման տեխնիկան և/կամ խցիկները կարող են պահպանել պահման պահանջվող խցիկների տարբեր տեսակների ջերմաստիճանները, եթե այդ ջերմաստիճանները կարող են սահմանվել վերջնական օգտագործողի կողմից արտադրողի ցուցումների համաձայն:

Աղյուսակ 4

Պահման պայմանները

Պահման ջերմաստիճանները (°C)							
Այլ խցիկ	Գինիների պահման խցիկ	Նկուղ ու խցիկներ	Թարմ սննդամթերքի պահման խցիկ	Նկուղ ու խցիկներ	Մեկ աստղանի խցիկ	Երկաստղանի խցիկ	Սննդամթերքի սառցարան և եռաստղանի խցիկ/դարակ
tom	twma	tcm	t1m, t2m, t3m, tma	tcc	t*	t**	t***
> + 14	+ 5 ≤ twma ≤ + 2 0	+ 8 ≤ tcm ≤ + 14	0 ≤ t1m, t2m, t3m ≤ + 8; tma ≤ + 4	- 2 ≤ tcc ≤ + 3	≤ - 6	≤ - 12 "	≤ - 18 "

1) հալեցման պարբերաշրջանում առանց սառույցի կենցաղային սառնարանային տեխնիկա, չորս ժամվա ընթացքում 3 K-ից ոչ ավելի ջերմաստիճանային շեղումը կամ գործող պարբերաշրջանի ընթացքի 20 %-ը, որը որ կարճ է թույլատրվում է:

Ծանոթագրություններ

tom՝ մեկ այլ խցիկի պահման ջերմաստիճան

twma՝ 0,5 K տատմամբ գինիների պահման խցիկի պահման ջերմաստիճան

tcm՝ նկուղի խցիկի պահման ջերմաստիճան

t1m, t2m, t3m, tma՝ թարմ սննդամթերքի խցիկի պահման ջերմաստիճաններ

tma՝ թարմ սննդամթերքի խցիկի պահման միջին ջերմաստիճաններ

tcc՝ պաղեցման խցիկի պահման ակնթարթային ջերմաստիճան

t*, t**, t***՝ սառեցված սննդամթերքի պահման խցիկների առավելագույն ջերմաստիճան

սառույցի պատրաստման համար պահման ջերմաստիճան և 0-աստղանի խցիկի համար 0 °C ցածր է:

կենցաղային սառնարանային տեխնիկայի համարժեք ծավալը բոլոր խցիկների համարժեք ծավալների գումարն է կազմում: Այն հաշվարկվում է լիտրերով և կլորացվում է տասներորդականով, ինչպես օրինակ՝

$$V_{eq} = \left[\sum_{c=1}^{c=n} V_c \times (25 - T_c) \frac{25 - T_c}{20} \times FF_c \right] \times CC \times BI$$

որտեղ՝

- n – խցիկների թիվն է,

— V_c խցիկի (խցիկների) պահման ծավալն է,

- T_c – խցիկի (խցիկների) նոմինալ ջերմաստիճանն է, ինչպես սահմանված է 2-րդ աղյուսակում,

— $25 - T_c$ – թերմադինամիկական գործոնն է, ինչպես սահմանված է 5-րդ աղյուսակում,

— FF_c , CC և BI ծավալի ուղղիչ գործոններն են, ինչպես սահմանված է 6-րդ աղյուսակում:

$25 - T_c$ թերմադինամիկ ուղղիչ գործոնը T_c խցիկի նոմինալ ջերմաստիճանի և $+ 25$ °C ջերմաստիճանում ստանդարտ ստուգման պայմաններում մթնոլորտային ջերմաստիճանի միջև ջերմաստիճանի տարբերությունն է, որն արտահայտվում է $+ 5$ °C-ով թարմ սննդամթերքի խցիկի համար միևնույն տարբերության հարաբերակցություն:

I հավելվածի (թ)-ից (ժգ) կետերում նկարագրված խցիկների համար թերմոդինամիկական գործոնները տրված են 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5

Սառնարանային տեխնիկայի խցիկների համար թերմոդինամիկական գործոնները

խցիկ	Նոմինալ ջերմաստիճանը	$(25 - T_c) / 20$
Այլ խցիկ	Նախագծման ջերմաստիճան	$25 - T_c 20'$
Նկուղ խցիկ/գինիների պահման խցիկ	+ 12 °C	0,65
Թարմ սննդամթերքի պահման խցիկ	+ 5 °C	1,00
Պաղեցման խցիկ	0 °C	1,25
Սառույց պատրաստելու խցիկ և 0-աստղանի խցիկ	0 °C	1,25
Մեկ աստղանի խցիկ	- 6 °C	1,55
Երկաստղանի խցիկ	- 12 °C	1,85
Եռաստղանի խցիկ	- 18 °C	2,15
սննդամթերքի սառեցման խցիկ (չորսաստղանի խցիկ)	- 18 °C	2,15

Ծանոթագրություններ

i) ունիվերսալ օգտագործման խցիկների համար թերմոդինամիկական գործոնները սահմանվում են է 2-րդ աղյուսակում տրված՝ արտադրողի ցուցումների համաձայն

վերջնական օգտագործողի կողմից ֆիքսման ենթակա և շարունակաբար պահպանվող ամենասառը տեսակի խցիկի նմինալ ջերմաստիճանով.

ii) երկաստղանի բաժնի համար (սառցարանի ներսում), թերմադինամիկական գործոնը սահմանված է $T_c = -12$ °C-ով.

iii) այլ խցիկների համար թերմադինամիկական գործոնը սահմանվում է նախագծված ամենացածր ջերմաստիճանով, որը կարող է ֆիքսվել վերջնական օգտագործողի կողմից և շարունակաբար պահպանվում է արտադրողի ցուցումների համաձայն:

Աղյուսակ 6

Ուղղիչ գործոնների արժեքը

Ճշգրտման գործոններ	Արժեքը	Պայմանները
FF (առանց սառցի)	1,2	Սառեցված սննդամթերքի պահման խցիկներ
	1	Այլ կերպ
CC (կլիմայի դաս)	1,2	T դասի համար (տրոպիկական) տեխնիկա
	1,1	ST դասի համար (սուբտրոպիկական) տեխնիկա
	1	Այլ կերպ
BI (ներկառուցված)	1,2	58 սմ լայնությամբ ներկառուցված տեխնիկայի համար
	1	Այլ կերպ

Ծանոթագրություններ

- i) FF-ը առանց սառույցի խցիկների համար ծավալի ուղղման/ճշգրտման գործակից.
- ii) CC-ն տվյալ կլիմայի դասի համար ուղղիչ գործոն է. Եթե սառնարանային տեխնիկան դասակարգվում է մեկից ավելի կլիմայի դասում, ապա ամենաբարձր ուղղիչ գործոնով կլիմայի դասը կիրառվում է համարժեք ծավալի հաշվարկման համար:
- iii) BI-ն ներկառուցված սարքի/տեխնիկայի համար ծավալի ուղղիչ գործոն է:

Կենցաղային սառնարանային տեխնիկայի մոդելի էներգաարդյունավետության ինդեքսի (ԷԱԻ) հաշվարկի համար կենցաղային սառնարանային տեխնիկայի տարեկան էներգասպառումը համեմատվում է իր տարեկան ստանդարտ էներգասպառման հետ:

1. Էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ) հաշվարկվում է և կլորացվում է տասնորդականով, ինչպես օրինակ՝

$$(25 - T_c) \frac{25 - T_c}{20}$$

որտեղ՝

AEC = կենցաղային սառնարանային տեխնիկայի տարեկան էներգասպառումն է

SAEC = կենցաղային սառնարանային տեխնիկայի տարեկան ստանդարտ էներգասպառումն է

2. Տարեկան էներգասպառումը (AEC) հաշվարկվում է կիլովատտ ժամ/տարեկան և կլորացվում է հարյուրերորդականով, ինչպես օրինակ՝

$$AEc = E24h \times 365$$

որտեղ՝

— E24h- կիլովատտ ժամում/24 ժամում կենցաղային սառնարանային տեխնիկայի էներգասպառումն է և կլորացվում է հազարերորդականով:

3. Տարեկան ստանդարտ էներգասպառումը (SAEC) հաշվարկվում է կիլովատտ ժամ/տարեկան և կլորացվում է հարյուրերորդականով, ինչպես օրինակ՝

$$SAEc = Veq \times M + N + CH$$

որտեղ՝

— Veq – կենցաղային սառնարանային տեխնիկայի համարժեք ծավալն է.

— CH – հավասար է 50 կիլովատտ ժամում/տարում առնվազն 15 լիտր պահման ծավալով պաղեցման խցիկով կենցաղային սառնարանային տեխնիկայի համար.

— M և N արժեքները տրված են 7-րդ աղյուսակում կենցաղային սառնարանային տեխնիկայի յուրաքանչյուր կատեգորիայի համար:

Աղյուսակ 7

M և N արժեքներն ըստ կենցաղային սառնարանային տեխնիկայի կատեգորիայի

Կատեգորիա	M	N
1	0,233	245
2	0,233	245
3	0,233	245
4	0,643	191
5	0,450	245
6	0,777	303
7	0,777	303
8	0,539	315
9	0,472	286
10	(1)	(1)
<p>(*) 10-րդ կատեգորիայի կենցաղային սառնարանային տեխնիկայի դեպքում M և N արժեքները կախված են ջերմաստիճանից և պահման ամենացածր ջերմաստիճանով խցիկի աստղի վարկանշում, որը կարող է կարգավորվել վերջնական սպառողի կողմից և շարունակաբար պահպանվել արտադրողի ցուցումների համաձայն: Եթե միայն “այլ</p>		

խցիկ”, ինչպես սահմանված է 2-րդ աղյուսակում և I հավելվածում, առկա է (ժգ) կետը կիրառվում են 1-ին կատեգորիայի համար M և N արժեքները: Եռաստղ խցիկներով տեխնիկան կամ սննդամթերքի սառեցման խցիկները համարվում են սառնարան-սառցարաններ:

ՀԱՎԵԼՎԱԾ V

Շուկայի վերահսկողության նպատակներով ստուգման ընթացակարգը

II հավելվածում սահմանված պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակներով անդամ պետությունների մարմինները ստուգում են մեկ կենցաղային սառնարանային տեխնիկա: Եթե չափված պարամետրերը չեն բավարարում արտադրողի կողմից ներկայացված արժեքները 4(2) հոդվածի համաձայն 1-ին աղյուսակում սահմանված միջակայքում չափումները պետք է իրականացվեն ևս երեք կենցաղային սառնարանային տեխնիկաների նկատմամբ: Այդ երեք հավելյալ կենցաղային սառնարանային տեխնիկայի չափված արժեքների միջին թվաբանականը պետք է բավարարի 1-ին աղյուսակում սահմանված միջակայքում II հավելվածում սահմանված պահանջներին:

Հակառակ դեպքում, մոդելը և կենցաղային սառնարանային տեխնիկայի բոլոր այլ մոդելները չեն բավարարում:

Աղյուսակ 1

Չափված պարամետրը	Ստուգման առավելագույն թույլատրելի շեղումները
Չափված համախառն ծավալ	Չափվող արժեքը չպետք է լինի պակաս չափված արժեքից (1) by more than 3 % or 1 l, անկախ նրանից, թե ինչքան մեծ է արժեքը:
Չափված պահման ծավալ	Չափված արժեքը չպետք է լինի չափված արժեքից ցածր ավելի քան 3 % կամ 1 l-ից, անկախ նրանից, թե ինչքան մեծ է արժեքը: Եթե նկուղի խցիկի և թարմ սննդամթերքի խցիկի ծավալները ենթակա են կարգավորման մեկը մյուսի նկատմամբ օգտագործողի կողմից, ապա այդ չափման անորոշությունը կիրառվում է այն դեպքում, եթե նկուղի խցիկը կարգավորվում է մինչև իր նվազագույն ծավալը:
Ստուգման կարողություն	Չափված արժեքը չպետք է լինի պակաս քան չափված արժեքը ավելի քան 10 %-ով:
Էներգասպառում	Չափված արժեքը չպետք է լինի ավելի քան չափված

	արժեքը (E24h) ավելի քան 10 %-ով:
10 լիտրից ցածր կենցաղային սառնարանային սպառման էներգասպառում	Չափված արժեքը չպետք է լինի ավել քան II հավելվածի 1(2գ) կետում սահմանված սահմանային արժեքը ավելի քան 0,10 Վոլտով՝ 95 % վստահելիության մակարդակի առկայության դեպքում:
Գինիների պահման տեխնիկա/սարք	Համեմատական խոնավության համար չափված արժեքը չպետք է գերազանցի նոմինալ միջակայքը՝ 10 %-ից ավելի:
(*) “Չափված/սահմանված արժեք” նշանակում է արժեք, որը ներկայացվում է արտադրողի կողմից:	

Բացի III հավելվածով սահմանված ընթացակարգի, անդամ պետությունների իշխանությունները պետք է պարբերաբար իրականացվեն չափումներ հուսալի, ճշգրիտ, արդիական և լայն ճանաչում ունեցող մեթոդներով, այդ թվում՝ այն մեթոդներով, որոնց հղում է արվել Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակված համապատասխան փաստաթղթերում:

Կենցաղային սառնարանային տեխնիկայի համար ինդիկատիվ հենանիշերը

Սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելու պահին շուկայում առկա լավագույն տեխնոլոգիան կենցաղային սառնարանային տեխնիկայի համար իրենց էներգասարոյունավետության ինդեքսի և աղմուկի մասով սահմանված են հետևյալ ձևով՝

Սառնարաններ, կոմպրեսորային տեսակի՝

— $E_{EI} = 29,7$ և 115 կիլովատտ ժամ/տարում տարեկան էներգասպառում թարմ սննդամթերքի խցիկում 300 լիտր պահման ընդհանուր ծավալի հաշվով ինչպես նաև 25 -լիտրանոց պաղեցման խցիկ, և T (տրոպիկական) կլիմայի դաս,

- Աղմուկ՝ 33 dB(A):

Սառնարաններ, աբսորբցիոն տեսակի՝

— $E_{EI} = 97,2$ և 245 կիլովատտ ժամ/տարում տարեկան էներգասպառմամբ 28 լիտրանոց պահման ընդհանուր ծավալի դեպքում թարմ սննդամթերքի խցիկում և N (չափավոր) կլիմայի դաս,

- Աղմուկ՝ ≈ 0 dB(A):

Սառնարաններ-սառցարաններ, կոմպրեսորային տեսակի՝

— $E_{EI} = 28.0$ և 157 կիլովատտ ժամ/տարում տարեկան էներգասպառում 255 լիտրանոց պահման ընդհանուր ծավալի համար, որից 236 լիտրը թարմ սննդամթերքի խցիկում իսկ 19 չորսաստղանի սառցարանային խցիկում և T (տրոպիկական) կլիմայի դաս,

- Աղմուկ՝ ≈ 33 dB(A):

Ուղղահայաց սառցարաններ, կոմպրեսորային տեսակի՝

— $E_{EI} = 29.3$ և 172 կիլովատտ ժամ/տարում տարեկան էներգասպառմամբ 195 լիտրանոց պահման ընդհանուր ծավալի դեպքում չորսաստղանի սառցարանում և T (տրոպիկական) կլիմայի դաս,

- Աղմուկ՝ ≈ 35 dB(A):

Վերևից բացվող սառցարաններ, կոմպրեսորային տեսակի՝

— $EEl = 27.4$ և 153 կիրվատտ ժամ/տարում տարեկան էներգասպառմամբ 223 լիտրանոց պահման ընդհանուր ծավալի դեպքում չորսաստղանի սառցարանում և T (տրոպիկական) կլիմայի դաս,

- Աղմուկ՝ ≈ 37 dB(A):

(1) ᄡS L 191, 22.07.2005ᄡ., ᄡᄡ 29:

(2) ᄡS L 236, 18.09.1996ᄡ., ᄡᄡ 36:

(3) ᄡS L 204, 21.07.1998ᄡ., ᄡᄡ 37: